

ՀՀ Արմավիրի մարզպետի ուղերձը վերջին դասի կապակցությամբ

Միրելի՛ շրջանավարտներ,

Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ այս գեղեցիկ և բոլորիդ համար շատ հիշարժան օրվա՝
Վերջին դասի առթիվ:

Այսօր տոն է, ավանդական հանդիսություն՝ ամփոփված բարեմաղթանքներով, հոգու
թրթիռով ու հուզմունքով, շնորհավորանքներով ու մի անբացատրելի հուզմունքով, որ
համակում է նույնիսկ շատ տարիներ առաջ դպրոցին հրաժեշտ տված մարդկանց:

Դպրոցական ուսումնառության ավարտը խորհրդանշող այս օրն ազդարարում է Ձեր
մուտքը դեպի մեծ կյանք՝ լի նորանոր բացահայտումներով ու նվաճումներով:
Յուրաքանչյուրիդ կյանքում լինելու են այսպիսի բազմաթիվ էջեր՝ նոր
հաջողություններով ու ձեռքբերումներով լի:

Անկախ Հայաստանի ձեր սերունդը մեր երիտասարդ պետության քաղաքական,
տնտեսական ու մշակութային արժեհամակարգի փոփոխությունների ակնատեսն
ու անմիջական մասնակիցն է եղել՝ պատվով հաղթահարելով անկախության սերնդին
հատուկ դժվարությունները:

Եվ այսօր դուք կյանք էք մտնում մեր նորօրյա պատմության հերոսական էջերի ոգով
դաստիարակված, առավել ազատ ու անկաշկանդ մտածողությամբ և
հաջողությունների հասնելու մեծ վճռականությամբ:

Մեր մատաղ սերնդի հայրենասիրության, ազգասիրության և
ռազմահայրենասիրական դաստիարակության բարձր մակարդակի վառ ապացույցն
էր այս տարվա ապրիլյան պատերազմի ընթացքում մարտական գործողությունների
մասնակից հերոսների սխրանքը և բանակի թիկունքում կանգնելու մեր
հայրենակիցների համախմբված պատրաստակամությունը:

Ուժեղ, հզոր երկիր ու պետություն ունենալը մեր ժողովրդի արժանապատիվ ապրելու
միակ երաշխիքն է, որն այլընտրանք չունի: Դուք նրանց արժանի շարունակողներն
էք:

Դուք պետք է պատրաստ լինեք ապրել և աշխատել կյանքի նոր պահանջներին
համահունչ, զինվեք հիմնարար գիտելիքներով՝ ձեր հոգու և մտքի հարստությունը,
երազանքները միախառնելու մեր երկրի զարգացման ու շենացման գործին:

Համոզված եմ, որ այս տարիներին ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները
կօգնեն Ձեզ ճիշտ ճանապարհ ընտրել կյանքում և արժանապատիվ անցնել այն՝
արդարացնելով Ձեր ծնողների և ուսուցիչների ակնկալիքները:

Դրա համար պետք է լինեք Հայաստանի Հանրապետության հպարտ ու արժանավոր
քաղաքացի, զարգացած ու բանիմաց անձ, բարձրորակ մասնագետ պարզապես լավ
մարդ:

Գեղեցիկ ու ջերմ այս օրվա առթիվ շնորհավորում եմ նաև շրջանավարտների ծնողներին: Թող ձեր զավակների հետ կապված նպատակներն ու իդներն իրականություն դառնան:

Խորին հարգանքով ու խոնարհումով շնորհավորում եմ բոլոր ուսուցիչներին, վաստակաշատ մանկավարժներին, ում սրտերն այսօր լի են ուրախությամբ ու վաստակած բերկրանքով, ովքեր մեծ նվիրումով սերունդ են կրթում, դաստիարակում և մեծ կյանք ճանապարհում:

Միբելի շրջանավարտներ,

Մեծ կյանքն իր դռներն է բացում ձեր առաջ, անցե՛ք ձեր կյանքի ճանապարհը պատասխանատվությամբ, հայրենիքի նկատմամբ սիրով ու հավատով, ու թող հաջողությունը փարոս դարձած ձեր մշտական ուղեկիցը լինի, իսկ սերն ու երջանկությունը թևածեն ձեր սրտերում:
Բարի երթ դեպի նոր կյանք:

*Լավագույն ցանկություններով՝
ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*